«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 23/09-001

«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության կանոններ»-ի համաձայն մատուցվող ծառայությունների գները և վճարման պայմանները սահմանելու մասին

01 սեպտեմբերի 2023թ.

Ղեկավարվելով «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ կանոնադրության 10.15. կետով և «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի՝ «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության կանոններ»-ի 13.1. կետով՝ ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության կանոններ»-ի համաձայն մատուցվող ծառայությունների գները համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության կանոններ»-ի համաձայն մատուցվող ծառայությունների դիմաց վճարման պայմանները համաձայն հավելված 2-ի:
3. Սահմանել, որ սույն որոշման հավելված 1-ում բերված գները ներառում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի սակագների մասին կանոններով հաստատված սակագները:
4. Ընկերության աշխատակից Արաքսյա Հարությունյանին հանձնարարել մինչև 04.09.2023թ-ը սույն որոշման մասին տեղեկացնել ընկերության բոլոր աշխատակիցներին և սույն որոշումը ներկայացնել «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ին:
5. Ընկերության աշխատակից Ռուզաննա Սարգսյանին հանձնարարել մինչև 08.09.2023թ-ը սույն որոշումը հրապարակել ընկերության պաշտոնական կայքում:
6. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում 01.10.2023թ-ից:
7. Սահմանել, որ սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվում «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրենի 23.01.2020թ-ի «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության կանոններ»-ի համաձայն մատուցվող ծառայությունների գները և վճարման պայմանները սահմանելու մասին թիվ 10/01-001 որոշումը:

«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ
Գլխավոր տնօրեն

Արամ Կայֆաջյան

Հավելված 1
«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրենի
01.09.2023թ-ի թիվ 23/09-001 որոշման

«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության կանոններ»-ի համաձայն մատուցվող ծառայությունների գները

ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արժեթղթերի ընդհանուր հաշվառման (ռեեստրավարման) ծառայություններ

1.1. Թողարկողի արժեթղթերի ռեեստրի սկզբնական տվյալների մուտքագրում ծրագրային Համակարգում.

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Թողարկողի վերաբերյալ տվյալների գրանցում ծրագրային Համակարգում	-	Անվճար
Թողարկողի արժեթղթերի վերաբերյալ տվյալների մուտքագրում ծրագրային Համակարգում	-	Անվճար

1.2. Բաժնային արժեթղթերի, մասնակցության վկայագրերի, ներդրումային ֆոնդերի փայերի հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում).

Ծառայության անվանումը	Միավորը և հաշվարկի պարբերականությունը	Միավորի մեծությունը	Ծառայության գինը
Բաժնային արժեթղթերի, մասնակցության վկայագրերի, փայերի հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար՝ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ / ամսական	1-ից մինչև 49-ը ներառյալ	10 000 ՀՀ դրամ
		50-ից մինչև 99-ը ներառյալ	12 500 ՀՀ դրամ
		100-ից մինչև 199-ը ներառյալ	17 000 ՀՀ դրամ
		200-ից մինչև 499-ը ներառյալ	25 000 ՀՀ դրամ
		500-ից մինչև 999-ը ներառյալ	30 000 ՀՀ դրամ
		1000 և ավելի	60 000ՀՀ դրամ

1.3. Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում).

Ծառայության անվանումը	Միավորը և հաշվարկի պարբերականությունը	Ծառայության գինը
Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	Տեղաբաշխված պարտատոմսերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) յուրաքանչյուր դասի համար ընդհանուր անվանական արժեք / ամսական	մինչև 1 550 000 000 << դրամը ներառյալ/ 0,004%
		1 550 000 000 << դրամից ավել / 62 000 << դրամ

1.4. Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում.

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար	6 000 << դրամ

2. **Տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառմամբ պայմանավորված ծառայություններ** (բացառությամբ կարգավորվող շուկայի միջոցով տեղաբաշխված, ինչպես նաև վերակազմակերպման հիմքով արժեթղթերի փոխարկումն ապահովելու համար լրացուցիչ տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառման դեպքերի, ընդ որում՝ արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման արդյունքում տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառմամբ պայմանավորված ծառայությունների գինը տեղաբաշխման գործընթացի վերջում վերահաշվարկվում է ընդհանուր անվանական ծավալի սկզբունքով)

2.1. Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում (բաժնետոմսերի տեղաբաշխում բացառությամբ բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի).

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Տեղաբաշխված բաժնետոմսերի գրանցման հաշվառում	Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք	մինչև 3 000 000 000 << դրամը ներառյալ / 0,1%, նվազագույնը՝ 30 000 << դրամ
		3 000 000 000 << դրամից ավել / 3 000 000 << դրամ
Տեղաբաշխված փայերի գրանցման հաշվառում	Տեղաբաշխված փայերի հաշվարկային արժեք	մինչև 3 000 000 000 << դրամը ներառյալ / 0,1%, նվազագույնը՝ 10 000 << դրամ
		3 000 000 000 << դրամից ավել / 3 000 000 << դրամ

2.2. Տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում (պարտատոմսերի տեղաբաշխում, բացառությամբ պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի).

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	Տեղաբաշխված պարտատոմսերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) ընդհանուր անվանական արժեք	մինչև 30 000 000 000 << դրամը ներառյալ / 0,01%, նվազագույնը՝ 30 000 << դրամ
		30 000 000 000 << դրամից ավել / 3 000 000 << դրամ

2.3. Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում.

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում	Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	մինչև 1 000 000 000 << դրամը ներառյալ / 0,1%, նվազագույնը՝ 30 000 << դրամ
		1 000 000 000 << դրամից ավել / 1 000 000 << դրամ

2.4. Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում.

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	Տեղաբաշխվող պարտատոմսերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) ընդհանուր անվանական արժեք	մինչև 4 000 000 000 << դրամը ներառյալ / 0,01%, նվազագույնը՝ 30 000 << դրամ
		4 000 000 000 << դրամից ավել / 400 000 << դրամ

3. Թողարկողի կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում

3.1. Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում. (ներառում է արժեթղթերի փոխարկումը (այդ թվում՝ բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխման, արժեթղթերի համախմբման (կոնսոլիդացիա) և բաժանման հիմքով), թողարկողի որոշմամբ մեկ դասի (տեսակի) արժեթղթերը մեկ այլ դասի (տեսակի) արժեթղթերի փոխարկումը, վերակազմակերպման (բացառությամբ վերակազմավորման այն դեպքի, երբ արժեթղթերի քանակի և անվանական արժեքի փոփոխություն տեղի չի ունենում) արդյունքում արժեթղթերի փոխարկումը, թողարկողի՝ իր կողմից թողարկված արժեթղթերի (բացառությամբ պարտատոմսերի) ձեռքբերումը, հետգնումը և մարումը կամ չեղյալ համարումը: Ընդ որում՝ փոխարկման դեպքում ծառայության գնի հաշվարկման հիմք է ընդունվում փոխարկման արդյունքում գրանցվող արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը, բացառությամբ բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպման և անվանական արժեքի նվազեցման հիմքով բաժնետոմսերի փոխարկման դեպքերի: Բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպմամբ և անվանական արժեքի նվազեցմամբ պայմանավորված կորպորատիվ գործողության դեպքում ծառայության գնի հաշվարկման հիմք է ընդունվում փոխարկվող արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը)

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում (բացառությամբ ներդրումային ֆոնդերի փայերի և կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի)	Կորպորատիվ գործողության առարկա արժեթղթերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) ընդհանուր անվանական ծավալ	մինչև 3 000 000 000 << դրամը ներառյալ/ 0,1%, նվազագույնը՝ 30 000 << դրամ
		3 000 000 000 << դրամից ավել / 3 000 000 << դրամ
Ներդրումային ֆոնդերի փայերի Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում	Կորպորատիվ գործողության առարկա փայերի ընդհանուր հաշվարկային արժեք	մինչև 3 000 000 000 << դրամը ներառյալ/ 0,1%, նվազագույնը՝ 10 000 << դրամ
		3 000 000 000 << դրամից ավել / 3 000 000 << դրամ
Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում	Կորպորատիվ գործողության առարկա արժեթղթերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) ընդհանուր անվանական ծավալ	մինչև 3 000 000 000 << դրամը ներառյալ/ 0,01%, նվազագույնը՝ 30 000 << դրամ
		3 000 000 000 << դրամից ավել / 300 000 << դրամ
Թողարկողի արժեթղթերի հաշվի բացում (փակում)	Հաշիվ	Անվճար

4. **Թողարկողի հարցման հիման վրա իր կամ իր կողմից թողարկված (տեղաբաշխված) արժեթղթերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման հետ կապված ծառայություններ**

4.1. **Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում.**

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում	Ցուցակ	Անվճար
Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում ռուսերենով կամ անգլերենով	Ցուցակ	5000 դրամ ցուցակի յուրաքանչյուր էջի համար

4.2. **Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի (առանց հիմքերի) տրամադրում**

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Տեղեկանքի տրամադրում (Էլեկտրոնային եղանակով)	Տեղեկանք	10 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում (թղթային եղանակով)		12 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում ռուսերենով կամ անգլերենով		Հայերենի համար սահմանված գնի կրկնապատիկը

4.3. **Այլ տեղեկությունների (բացառությամբ արժեթղթերի (փայերի) փոխանցման) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի).**

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Տեղեկանքի տրամադրում (Էլեկտրոնային եղանակով)	Տեղեկանք	10 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում (թղթային եղանակով)		12 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում ռուսերենով կամ անգլերենով		Հայերենի համար սահմանված գնի կրկնապատիկը

5. **Թողարկողի մասին տվյալների փոփոխությունների գրանցում Համակարգում** (ներառում է թողարկողի գտնվելու կամ գործունեության վայրի, բաժնետիրական ընկերությունների տեսակի, տնօրենի փոփոխության, ընկերության անվանման փոփոխության կամ արժեթղթերի մասին տեղեկությունների փոփոխությունը (արժեթղթերի փաստաթղթային ձևի փոփոխությունը ոչ փաստաթղթայինի և հակառակը))

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Տվյալների փոփոխության մուտքագրում Համակարգ	-	Անվճար

ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6. **Թողարկողի հանձնարարագրի հիման վրա շահութաբաժինների հաշվարկում և վճարում**

Ծառայության անվանումը	Միավորը և հաշվարկի պարբերականությունը	Ծառայության գինը

Շահութաբաժինների հաշվարկում և վճարում	Շահութաբաժինների վճարման համար նախատեսված ֆոնդի ընդհանուր գումար / յուրաքնաչյուր գործընթացի համար	1 %, նվազագույնը՝ 100 000 << դրամ

7. Թողարկողի հանձնարարագրի հիման վրա պարտատոմսերի արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում

Ծառայության անվանումը	Միավորը և հաշվարկի պարբերականությունը	Ծառայության գինը
Պարտատոմսերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում	Վճարված / բաշխված դրամական միջոցների գումարը / յուրաքնաչյուր գործընթացի համար	0,1 %, նվազագույնը՝ 100 000 << դրամ

8. Ծանուցում թողարկողին արժեթղթերի (փայերի) գործառնությունների մասին (արժեթղթերի (փայերի) փոխանցման հանձնարարականների և արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ)

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Ծանուցում	Տարեկան	500 000 << դրամ

9. Թողարկողին օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված արժեթղթերի ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Հսկողության իրականացում	Տարեկան	1 000 000 << դրամ

10. Ներդրումային ֆոնդի փայերի տեղաբաշխման նպատակով գնման կամ մարման նպատակով հետգնման հայտի ընդունում և գրանցում (սակագինը գանձվում է հայտը ներկայացրած անձից)

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Փայերի տեղաբաշխման նպատակով գնման հայտի ընդունում և գրանցում	Յուրաքանչյուր հայտ	1 000 << դրամ
Փայերի մարման նպատակով հետգնման հայտի ընդունում և գրանցում	Յուրաքանչյուր հայտ	1 000 << դրամ

ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ (ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ) ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11. Սեփականատերերի արժեթղթերի հաշիվներում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանման հետ կապված ծառայություններ

11.1. Արժեթղթերի (փայերի) հաշվի բացում, փոփոխություն, պահպանում և փակում

Ծառայության անվանումը	Միավորը և հաշվարկի պարբերականությունը	Ծառայության գինը
Արժեթղթերի հաշվի բացում ֆիզիկական անձանց համար	Արժեթղթերի հաշիվ	Անվճար
Արժեթղթերի հաշվի բացում հայկական իրավաբանական անձանց համար		15 000 ՀՀ դրամ
Արժեթղթերի հաշվի բացում օտարերկրյա իրավաբանական անձանց համար		40 000 ՀՀ դրամ
Արժեթղթերի հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում		Անվճար
Հաշվում առկա արժեթղթերի պահպանում	Յուրաքանչյուր օրվա վերջին հաշվետիրոջ հաշվում առկա արժեթղթերի մնացորդների անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեքների հանրագումար /ամսական	Դեպոզիտարիայի կողմից տվյալ ամսվա համար հաշվարկված գումարի և դրա 100%-ի հանրագումարը, (չի գանձվում, եթե ստացված թիվը 1000 ՀՀ դրամից պակաս է)
Արժեթղթերի հաշվի փակում		Անվճար

12. Կարգավորվող շուկայից դուրս արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված ծառայություններ (Փոխանցման Ծառայության գինը չի գանձվում այն դեպքերում, երբ աժեթղթեր փոխանցող / ստացող կողմ է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկը)

12.1. Բաժնետոմսերի (փայերի) հասարակ փոխանցում (ներառյալ «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքով) ցանկացած հիմքով, բացառությամբ 12.3., 12.4. և 12.7. կետերով սահմանված դեպքերի. (ներառում է առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի մասնավորեցման, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Դեպոզիտարիան չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում արժեթղթերի մեկ հաշվից մյուսին)

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը

Բաժնետոմսերի (փայերի) փոխանցում, (ներառյալ՝ ազատ առաքումը՝ համաձայնությամբ)	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը ներառյալ/ 0.1%, նվազագույնը՝ 5 000 ՀՀ դրամ
		3 000 000 000 ՀՀ դրամից ավել / 3 000 000 ՀՀ դրամ

12.2. Պարտատոմսերի հասարակ փոխանցում (ներառյալ «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքով) ցանկացած հիմքով, բացառությամբ 12.3., 12.4. և 12.7. կետերով սահմանված դեպքերի. (ներառում է առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի մասնավորեցման, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Դեպոզիտարիան չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում արժեթղթերի մեկ հաշվից մյուսին)

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Պարտատոմսերի փոխանցում, (ներառյալ՝ ազատ առաքումը՝ համաձայնությամբ)	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	մինչև 4 000 000 000 ՀՀ դրամը ներառյալ/ 0.01%, նվազագույնը՝ 5 000 ՀՀ դրամ
		4 000 000 000 ՀՀ դրամից ավել 400 000 ՀՀ դրամ

12.3. Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում մեկ հաշվից մյուսին.

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում	Հանձնարարագիր	5 500 ՀՀ դրամ

12.4. Պորտֆելի փոխանցում՝ մեկ հաշվի օպերատորի մոտ բացված հաշվետիրոջ հաշվից այլ հաշվի օպերատորի մոտ բացված տվյալ հաշվետիրոջ հաշվին՝ արժեթղթերի հաշվում առկա ամբողջ մնացորդի փոխանցմամբ.

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Պորտֆելի փոխանցում	Հանձնարարագիր	6 000 ՀՀ դրամ

12.5. Բաժնետոմսերի (փայերի) փոխանցում "Առաքում վճարման դիմաց" (DVP) սկզբունքով ցանկացած հիմքով.

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Բաժնետոմսերի (փայերի) DVP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	Մինչև 2 000 000 000 ՀՀ դրամը ներառյալ/ 0.15%, նվազագույնը՝ 5 000 ՀՀ դրամ
		2 000 000 000 ՀՀ դրամից ավել / 3 000 000 ՀՀ դրամ

12.6. Պարտատոմսերի փոխանցում "Առաքում վճարման դիմաց" (DVP) սկզբունքով ցանկացած հիմքով.

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը

Պարտատոմսերի DVP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	Մինչև 2 000 000 000 ՀՀ դրամը հերառյալ/ 0.015%, նվազագույնը՝ 5 000 ՀՀ դրամ
		2 000 000 000 ՀՀ դրամից ավել / 300 000 ՀՀ դրամ

12.7. Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման արդյունքում արժեթղթերի փոխանցում.

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման արդյունքում արժեթղթերի փոխանցում	Իրացվող արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	Մինչև 140 000 000 ՀՀ դրամը ներառյալ / 0.3 %, նվազագույնը՝ 15 000 ՀՀ դրամ
		140 000 000 ՀՀ դրամից ավել / 420 000 ՀՀ դրամ

13. Արժեթղթերի գրավի իրավունքի, արժեթղթերի սառեցման, առևտրային արգելադրման, ինչպես նաև ձայնի իրավունքի սահմանափակման գրանցման հետ կապված ծառայություններ

13.1. Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարագրով տվյալ հաշվետիրոջ անունով բացված հաշվում արժեթղթերի գրավի իրավունքի գրանցում.

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Բաժնետոմսերի (փայերի) գրավի իրավունքի գրանցում	Գրավի առարկա բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը ներառյալ / 0,1%, նվազագույնը՝ 15 000 ՀՀ դրամ, իսկ եթե գրավառուն, օտարերկրյա կամ միջազգային կազմակերպություն է, ապա նվազագույնը՝ 20 000
		3 000 000 000 ՀՀ դրամից ավել / 3 000 000 ՀՀ դրամ
Պարտատոմսերի գրավի իրավունքի գրանցում	Գրավի առարկա պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը ներառյալ / 0,02%, նվազագույնը՝ 3 000 ՀՀ դրամ, իսկ եթե գրավառուն, օտարերկրյա կամ միջազգային կազմակերպություն է, ապա նվազագույնը՝ 10 000
		3 000 000 000 ՀՀ դրամից ավել / 600 000 ՀՀ դրամ

13.2. Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարականի հիման վրա արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցում.

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Սառեցում	Սառեցված արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը ներառյալ / 0,1%, նվազագույնը՝ 15 000 ՀՀ դրամ
		3 000 000 000 ՀՀ դրամից ավել / 3 000 000 ՀՀ դրամ

13.3. Կարգավորվող շուկայում կնքված գործարքների արդյունքում արժեթղթերի առևտրային արգելադրում.

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Առևտրային արգելադրում	-	Անվճար

13.4. Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում արգելադրված բաժնետոմսերի համար.

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում	Քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	0,5 %, նվազագույնը՝ 10 000 << դրամ

13.5. Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում.

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում	Գրավադրված, սառեցված, առևտրային նպատակով արգելադրված և այլ սահմանափակումների ենթարկված արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	Անվճար

14. Հաշվետիրոջը տեղեկությունների տրամադրում

14.1. Հաշվետիրոջ հարցման հիման վրա արժեթղթերի հաշվից (այդ թվում՝ ռեեստրից) քաղվածքի կամ արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների մասին տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի).

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Արժեթղթերի հաշվից քաղվածքի տրամադրում՝ հաշվում առկա միայն մեկ դասի արժեթղթի մասով (ռեեստրից քաղվածք))	Քաղվածք	Անվճար
Արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ հաշվետվության տրամադրում	Հաշվետվություն	Անվճար
Արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում	Տեղեկանք	5 000 << դրամ
Ռեեստրից քաղվածքի կամ արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ հաշվետվության տրամադրում ռուսերենով կամ անգլերենով	Քաղվածք կամ հաշվետվություն	5000 դրամ ամեն էջի համար
Արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում ռուսերենով կամ անգլերենով	տեղեկանք	10 000 << դրամ

14.2. Հաշվետիրոջ հարցման հիման վրա արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների մասին տեղեկանքի տրամադրում (հիմքերով).

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը

Տեղեկանքի տրամադրում (էլեկտրոնային եղանակով)	Տեղեկանք	5 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում (թղթային եղանակով)		8 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում փոստով		9 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում ռուսերենով կամ անգլերենով		Հայերենի համար սահմանված գնի կրկնապատիկը

14.3. Հաշվետիրոջ հարցման հիման վրա ռեեստրից կամ արժեթղթերի հաշվից այլ տեղեկությունների վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի).

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Տեղեկանքի տրամադրում (էլեկտրոնային եղանակով)	Տեղեկանք	5 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում (թղթային եղանակով)		7 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում փոստով		8 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում ռուսերենով կամ անգլերենով		Հայերենի համար սահմանված գնի կրկնապատիկը

14.4. Հաշվետիրոջ հարցման հիման վրա ռեեստրից կամ արժեթղթերի հաշվից այլ տեղեկությունների վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով).

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Տեղեկանքի տրամադրում (էլեկտրոնային եղանակով)	Տեղեկանք	6 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում (թղթային եղանակով)		10 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում փոստով		11 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում ռուսերենով կամ անգլերենով		Հայերենի համար սահմանված գնի կրկնապատիկը

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԱՀԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. (ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ԿԱՐՈՂ ՏԱՐԲԵՐՎԵԼ՝ ԿԱԽՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԱՀԱՌՈՒԻՑ)

15. Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահառուական ծառայությունների նկատմամբ կիրառվում են «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ ներքին պահառուական համակարգի միջոցով իրականացվող պահառուական ծառայությունների համար սահմանված սակագները:

16. Օտարերկրյա պահառուի մոտ բացված հաշիվներում պահպանվող դրամական միջոցների պահպանման գինը կազմում է Օտարերկրյա պահառուի կողմից հաշվարկված սակագնի եռապատիկը:

Հավելված 2
«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրենի
01.09.2023թ-ի թիվ 23/09-001 որոշման

«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության կանոններ»-ի համաձայն մատուցվող ծառայությունների դիմաց վճարման պայմանները

1. «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) գլխավոր տնօրենի 23.01.2020թ-ի թիվ 20/01-001 որոշման հավելված 1-ով (այսուհետ՝ Հավելված 1) սահմանված ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է ՀՀ դրամով, բացառությամբ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից վճարումների դեպքերի, որոնք կարող են իրականացվել նաև ազատ փոխարկելի արտարժույթով (ԱՄՆ դոլար, Եվրո), ինչպես նաև ռուսական ռուբլիով: Արտարժույթով վճարման դեպքում ՀՀ դրամով արտահայտված գումարները վերահաշվարկվում են համապատասխան արտարժույթի՝ հաշիվը դուրս գրելու օրվա համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքով:

2. Եթե Ընկերության կողմից մատուցվող ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվելու է ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով արտահայտված գնով և ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի արժեքը արտահայտված է արտարժույթով, ապա այդ ցուցանիշի արժեքը վերահաշվարկվում է հաշվարկի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքով, որի նկատմամբ հաշվարկվում է համապատասխան տոկոսը:

3. Սույն պայմաններով այլ բան նախատեսված չլինելու դեպքում Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է անկանխիկ ձևով (փոխանցումով), մինչև օրենքով, այլ իրավական ակտերով և Ընկերության կանոններով սահմանված կարգով ծառայություններից օգտվելու համար համապատասխան փաստաթղթերը Ընկերությանը ներկայացնելը, բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացվել են Ընկերության կողմից ընդունելի վճարման երաշխիքներ:

4. Արժեթղթերի ռեեստրի վարման և պահպանման ծառայության դիմաց վճարումները կատարվում են հետևյալ ընթացակարգով.

4.1. Վճարումները կատարվում են կանխավճարային սկզբունքով. յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև տվյալ եռամսյակի առաջին ամսվա 20-ը:

4.2. Յուրաքանչյուր եռամսյակի համար վճարման ենթակա գումարի չափը որոշվում է հիմք ընդունելով նախորդ եռամսյակի վերջին օրվա դրությամբ ռեեստրում առկա արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակը (պարտատոմսերի դեպքում՝ տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքը):

4.3. Ընկերությունը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո դուրս է գրում հաշիվ, որում կամ որին կից ներկայացվում է նաև հաջորդ եռամսյակում վճարման ենթակա գումարի վերաբերյալ տեղեկատվություն:

4.4. 4.3. կետում նշված հաշվում ծառայության գումարի հաշվարկը կատարվում է ըստ ամիսների՝ յուրաքանչյուր ամսվա համար որպես հաշվարկի հիմք ընդունելով տվյալ ամսվա վերջին օրվա դրությամբ ռեեստրում առկա արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակը (պարտատոմսերի դեպքում՝ տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքը):

4.5. Եթե 4.3. կետում նշված հաշվում ներառված գումարի և վճարված կանխավճարի համադրման արդյունքում պարզվում է, որ հաճախորդը լրիվությամբ չի վճարել 4.3. կետում նշված հաշվում հաշվարկված ծառայության գումարը, ապա պակաս վճարված գումարը հաճախորդը պետք է վճարի մինչև հաջորդ կանխավճարի վճարման համար սահմանված ժամկետի ավարտը:

4.6. Ռեեստրի վարման պայմանագրի կնքման եռամսյակի համար վճարումը կատարվում է մինչև հաջորդ եռամսյակի առաջին ամսվա 20-ը՝ պայմանագրի կնքման եռամսյակի վերջում դուրս գրված հաշվին համապատասխան:

4.7. Ռեեստրի վարման պայմանագրի լուծման դեպքում տվյալ օրվա դրությամբ իրականացվում է վերջնահաշվարկ և եթե դրա արդյունքում պարզվում է, որ հաճախորդն ունի գերավճար, այն վերադարձվում է հաճախորդին (նրա իրավահաջորդին):

5. Սեփականատիրոջ արժեթղթերի հաշվի պահպանման և անվանատիրոջ արժեթղթերի հաշվի պահպանման ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են հետևյալ ընթացակարգով.

5.1. Վճարումները կատարվում են կանխավճարային սկզբունքով. յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև տվյալ եռամսյակի առաջին ամսվա 20-ը:

5.2. Յուրաքանչյուր եռամսյակի համար վճարման ենթակա կանխավճարի գումարի չափը որոշվում է հիմք ընդունելով նախորդ եռամսյակի վերջին օրվա դրությամբ հաշվում առկա բոլոր դասերի արժեթղթերի մնացորդների անվանական արժեքների հանրագումարը:

5.3. Ընկերությունը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո դուրս է գրում հաշիվ, որում կամ որին կից ներկայացվում է նաև հաջորդ եռամսյակում վճարման ենթակա կանխավճարի վերաբերյալ տեղեկատվություն:

5.4. 5.3. կետում նշված հաշվում ծառայության գումարի հաշվարկը կատարվում է ըստ ամիսների՝ յուրաքանչյուր ամսվա համար որպես հաշվարկի հիմք ընդունելով Դեպոզիտարիայի կողմից տվյալ ամսվա համար հաշվարկված գումարը:

5.5. Եթե 5.3. կետում նշված հաշվում ներառված գումարի և վճարված կանխավճարի համադրման արդյունքում պարզվում է, որ հաճախորդ լրիվությամբ չի վճարել 5.3. կետում նշված հաշվում հաշվարկված ծառայության գումարը, ապա պակաս վճարված գումարը հաճախորդը պետք է վճարի մինչև հաջորդ կանխավճարի վճարման համար սահմանված ժամկետի ավարտը:

5.6. Պահառության/ենթապահառության պայմանագրի կնքման եռամսյակի համար վճարումը կատարվում է մինչև հաջորդ եռամսյակի առաջին ամսվա 20-ը՝ պայմանագրի կնքման եռամսյակի վերջում դուրս գրված հաշվին համապատասխան:

5.7. Պահառության/ենթապահառության պայմանագրի լուծման դեպքում տվյալ օրվա դրությամբ իրականացվում է վերջնահաշվարկ և եթե դրա արդյունքում պարզվում է, որ հաճախորդն ունի գերավճար, այն վերադարձվում է հաճախորդին (նրա իրավահաջորդին):

6. Եթե հաճախորդի արժեթղթերի փոխանցման հանձնարարականի կատարման արդյունքում հաճախորդի արժեթղթերի հաշվի մնացորդը կդառնա զրո, ապա մինչև արժեթղթերի փոխանցման հանձնարարականը Ընկերությանը ներկայացնելու պահը հաճախորդը պետք է վճարի նաև արժեթղթերի հաշվի պահպանման ծառայության գծով մինչև փոխանցման պահը հաշվեգրված գումարը:

7. Հաշվետիրոջ (այդ թվում՝ անվանատիրոջ) հաշիվներում առկա արժեթղթերի պահպանման սակագինը չի հաշվարկվում ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի կամ հրապարակային ներդրումային ֆոնդերի փայերի նկատմամբ: Անվանատիրոջ մոտ վերոնշյալ արժեթղթերի առկայության դեպքում վերջինս մինչև յուրաքանչյուր եռամսյակի ավարտը դրանց մնացորդների մասին պետք է տեղեկացնի Ընկերությանը, հակառակ դեպքում Ընկերությունը կարող է համարել, որ անվանատիրոջ մոտ նշված անձանց պատկանող արժեթղթեր առկա չեն:

8. ՀՀ կենտրոնական բանկի հետ կնքված ռեպո/ հակադարձ ռեպո գործարքի արդյունքում ՀՀ կենտրոնական բանկի արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերի պահպանման սակագինը հաշվարկվում է արժեթղթերը փոխանցած կողմի նկատմամբ:

9. Հաճախորդների կողմից վճարումները սույն հավելվածի 3-5 կետերով սահմանված ժամկետներից 45 օրից ավելի ուշացնելու դեպքում Ընկերությունն այդ անձանց նկատմամբ կարող է հաշվարկել տույժ՝ վճարի ուշացման 45-րդ օրվան հաջորդող յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,13%-ի չափով: Ընդ որում յուրաքանչյուր կոնկրետ պահի դրությամբ կուտակված տույժի գումարը չի կարող գերազանցել տվյալ պահի դրությամբ առկա պարտքի մայր գումարին: Սույն կետի հիման վրա հաշվարկված տույժի առկայության դեպքում Հաճախորդի կողմից վճարված գումարից առաջին հերթին մարվում է կուտակված տույժը, այնուհետև պարտքի մայր գումարը:

10. Հավելված 1-ով նախատեսված գները չեն ներառում ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) և ենթակա են ԱԱՀ-ով հարկման, եթե ՀՀ օրենսդրությամբ դրանք ազատված չեն ԱԱՀ-ից:

11. Հավելված 1-ին համապատասխան հաշվարկված գումարները, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված տույժերը կլորացվում են դեպի ներքև 1 (մեկ) Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ:

12. Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցման և "Առաքում վճարման դիմաց" սկզբունքով արժեթղթերի փոխանցման համար սահմանված գումարները գանձվում են ինչպես արժեթղթեր փոխանցողից, այնպես էլ արժեթղթերը ստացողից:

13. Ընկերության գլխավոր տնօրենի որոշմամբ կարող են սահմանվել չափանիշներ, որոնց բավարարող հաճախորդների նկատմամբ կկիրառվեն Հավելված 1-ով սահմանված գների համեմատ հաճախորդի համար առավել արտոնյալ գներ:

14. «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի սակագների մասին կանոններով նախատեսված դեպքում ծառայությունների կասեցման դեպքում կասեցման պահից դադարեցվում է նաև ծառայությունների դիմաց գանձվող վճարների և տույժերի հաշվարկը, իսկ կասեցումից հետո պայմանագրի վերսկսման համար հաճախորդից գանձվում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի սակագների մասին կանոններով սահմանված գումարը, եթե Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ այլ գումար սահմանված չէ:

15. Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդի կողմից սահմանված վճարումները ուշացնելու դեպքում վճարման ենթակա գումարները անակցեպտ կարգով գանձել Հաճախորդի՝ Ընկերությունում վարվող դրամային կամ, արտարժութային հաշիվներից:

16. Այն դեպքում, երբ թողարկողը կամ հաշվետերը ցանկանում է ռեեստրից տեղեկություններ ստանալ հայերենի հետ միաժամանակ նաև անգլերեն կամ ռուսերեն լեզուներով, ապա այդ տեղեկությունների տրամադրման դիմաց գանձվում է միայն անգլերենով կամ ռուսերենով տեղեկության տրամադրման գինը:

17. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 98-րդ կետի, 2-րդ մասի 6-րդ ենթակետով սահմանված անձանց տեղեկությունների տրամադրումն իրականացվում է նշված հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավասու մարմնի կողմից սահմանված սակագներով: